70. ՄՈՒԽԱՆՆԱԹ ԱԽՊԵՐԱԿՆԱՆԻՔ

Կէլնի մեյ թակավոր, կունենա իրեք լաճ, մեկ ախչիկ: Խեր որ կմեռնի, լաճերաց կկանչի, կասի. - Ծեզնե մեյ խնդիրք ունեմ, որ իմ ախչկան աղեկ շախեք, ինչխ ես կուզի, տյուք էլ ըսկուն ուզեք:

Ինոր մեռնելուց սորա լաճերն աղորթմանց ըսկուն շատ կուզեն ինոր, որ իւեր կընցուցեն: Զըմեն իրիկուն որ կուզան տուն՝ կառնեն վեր ծըյվերաց, իրիսներ կպաքնեն, իսկի չեն տնե գեփին չում քնոս կյախ: Էս լաճերաց կքտերն էլ որ էսա պան կտիսնան, մունջ կպատռեն, կճըղվեն: Մեկ օր էլ, որ կտիսնան ճար չկա, իսոնք էրթալով իրենց սեր կավիլցուցեն, խոսկներ մեյ կանեն, մեկ իրիկուն իրկընեռաց կկայտեն կասեն. «Ծեր ուզանական քորն էսօր ոսկի խնձորն իթալ թոներն իրցեց»: Խո-գեռ սութ, ուրենքն ին թալե: Ախպերներն էլ կասեն. «Պան չկա. ոսկի խնձորն էլ, մենք էլ, տյուք էլ ինոր մատաղ»: Կտիսնան, որ էս չէլավ, մեկ էլ կէլնեն կասեն՝ ոսկի կարաս կոտրեց: Ախպերներ էլմ ըսկուն կասեն: Մեկ օր էլ կասեն՝ սամուռ քյուրքն իթալ թոներն իրիցեց: Որ կտեսնան էլմ բոշ, չեն կանա ինոնց սիրտ պաղըցուցե, կասեն. «Էսասկընա գյո չէլնե, բարե պիրենք մեր լաճեր մորթենք, էլենք ասենք՝ ծեր քորն ի մորթե, բալքի իսորով սրտներ կտրի ինորից»: Աղորթմանց կէլնեն էն օր ճոչ ախպոր լաճն ուրուրոցի մեջ կմորթեն, տանայն էլ կթալեն էտ ախչկան ջեռբ. իրիկուն որ իրկներ կուգան տուն կէլնեն կդայտեն, կասեն. «Ծեր ուզանական քոր, էտըսկնեմ շատ կուզեք, էս օր էլ էլե ծեր լաճ մեջ ուրուրոցեն մորթե. չեք հավատա. ջեռբն աչկեք, տեսեք գյո արնոտ տանայն էլ ջեռբն ի»: Ախպերներ որ էսա պան կլսեն. ըստրիս ըսկուն կէլնեն որ, կրա կկտրեն խեստխեստուն մշակ կկանչեն, քեոր կուտան ծեռ կասեն. «Իսոր տանես զանես սարե սար, քարե քար, մեռուցես, փունջմ մազ թաթխես մեջ արընին, պիրես»:

Մշայն ի, կառնի կէրթա սար, ամա ծեռ չէրթա, որ սպանի· Մենակ

փունջմ մազ կկտրի, կպիրի, կթաթխի մեջ ուլու արնին, կտանի կուտա ուր աղեքտերաց, կասի՝ գեռ՛ ծեր ուզած: Ախպոր կքտներն էլ որ կտիսնան՝ սրտներ կխովնա, կուրախնան:

Էսասկընա էն խեղճ ախչիյ մենայ կմնա սարերաց, քարերաց մեչ. կուլա, կշփվի, կթփվի: Ախու աչիչ քարեր մե մեյ գել կտրե, մե-մեյ ասոչ կէրևան, կասի՝ մկա կուգան ձի կուտեն, դեորըմ կուգան:

Էն օրն էլ աստծուց կէլնի, մեկ ուրիշ թակավրու լաճ կուգա էն սար ավ անելու, էն ախչիյն էլ ըուսստ կուգա: Թակավրու լաճ որ ախչկան խորոտկութեն կտիսնա, խելք կէրթա, կառնի թարք, կտառնա տուն: Կտանի կեօրեռվըրի, սիրտ կուտա, որ քիչմ կռհաթի, կխառնցուցի. - Տյուն վի՞ր ախչիյն ես, ինչի՞ իր իկե էնտեղ:

Ախչիյն էլ կլեռխն էկած զըմեն որ կասի, թակավրու լաճն էլ կասի. - Կասաֆաթ մ'ասնե, ես քե իրիկ, տյու ձի կնիկ:

Ախչիյն էլ կասի՝ աղեկ:

Կփսայվեն կէլնեն իրիյ-կնիկ:

Էս պան որ կծըրընձըվի, խարար կէրթա կխասնի էս ախչկան ախպոր կքտերած ականջ: Ինոնք էլ որ կլսեն՝ էլմ կինեն մեջ մյառյախի: Կասեն. - Էն սնավոր սաղ մնայ, մեկ օր մեր արած պիտի խանի տյուս. ինչխ անենք ինչխ չանենք, բարե էլնենք քանիմ ջադի պառավ օրոխկենք էրթան էն քաղաք, ռալքի ճարմ անեն՝ էն մոմռավոր կուրիսցուցեն:

Աղորթմանց, կէլնեն իրեք խատ ջադի պառավ կկընդնեն, կօրոխկեն, որ ինչ անեն չանեն, ինոր կուրիսցուցեն:

Էն թակավրու լաճն էլ՝ կնիյ տղով թողնելով, ինք կէրթա ուրիշ երկիր. մոր կթամխի, որ ուր զրի՝ ուր կնիյն ինչ կպիրի, ինչ չի պիրե: Կմնա ինն ամիս կթըմըմի, կնիյ մեյ ոսկի ճկոթ լաճ, մեյ ոսկիծամ աղջիյ կպիրի: Քաղաք հըմեն մարթ կլսի, կուրախնա: Մերն էլ կէլնի կիրմ կկրի, կուտա մշակուն, կասի՝ տար իմ լաճուն:

Էն իրեք պառըվներն էլ, որ կլսեն, կէլնեն կէրթան վեր ճամխին տեղմ կկայնեն, էն թուխթ տարող որ կուկյա պիտի ընցնի, կկայնընցուցեն՝ խարար, խարար կասեն, էրթանք մեր տուն քիչմ խանգստացի, նոր էլի կնա: Էն էլ կէրթա: Կտանեն տուն, թուխթ խասպելութնով կառնեն ծեռնեն, կտանեն կփոխեն, մեկ ուրիշմ կգրեն մոր պերնիյ, թե՝ քո կնիյ ծնավ մեյ սանդ, մեկ էլ սանդի ծեծ իպե, ի՞նչ կասես: Կպիրեն կուտան, էն խեղճ մարթն էլ իսկի ֆառղին չէրթա, կառնի կտանի կուտա ուր ադին: Թակավրու լաճ, որ էսա գիր կկարդա, խելք կէրթա գլխուց, կասի՝ աշխըրի մեչ խաղք էլանք, ինչ՞խ պիտի էլնի:

Մշայ որ ուր աղի մռթել կտեսնա՝ կշիվարի, կասի. - Թակավորն ապրած, մեյ մարթ էլ ոսկիճկոթ լաճու, ոսկիծամ ախչկան վերեն մռթի՞:

Իսոր վերեն թակավրու լաճու միթք կէլնի էրկու ճող. մեր չեշիդմ ի գրե, մշայ չեշիդմ կասի: Իսոր վերեն կէլնի մոր կգրի՝ պախեք չում գամ: Կուտա էլմ մշակուն կճամխի ետ: Մշայ կառնի կուգա, էլմ վեր ճամխին

էտ իրեք պառվըներ կէլնեն տեմ. խաբար, խաբար, էլմ կտանեն տուն, թուխթ էլմ խապելութնով կառնեն ծեռնեն, կտանեն կյախտիյ կպանան, կկարդան կտիսնան, որ գրե. պախեք չում գամ: Ինոնք էլմ կճոճեն, մեկ ուրիշմ կգրեն, թե. էսա թուխթ կարդալուն պես, տղեյներ տաս ծեռ, օրոխկես սար: Էսասկընա կգրեն, կպիրեն կուտան մշակուն: Մշայն էլ, էլմ միամիտ, թուխթ կառնի կտանի կուտա խաթյունին: Խաթյուն որ էսա թուխթ կկարդա, կշըշկոի կմնա, թե էսա լաճն ինչի՞ էսասնա կանի, մարթ ուր դեոլվթին քարով զանի՞: Կնստի կմեզի, մեյ դեհեն ծեռ չէրթա, մեյ դեհեն լաճու խաբրիյ չկանա էլնե, կասի. զայի լաճս պամ՝ կիտի, որ ըսնա կանի: Կէլնի տղեյներ կուտա խարսի ծեռ, կճամխի սար:

Խեղճ խարս ըստրիս ուր երկու ծյաքերաց խեստ լալելեն էլմ կինի սար, քար, շատ կէրթա քիչ կէրթա, կնեղանա՝ էնտեղ կեստմ կէլնի, կպառկի ինոր ատի, քուն կտանի, դեորմ կքնի: Մեկ էլ կարթընա, աչկ կպանա, կտիսնա որ ի՞նչ. մեկ ըսկուն խորոտ քեռշկ-սարեմ կա էնտեղ, որ ասել չէլնե: Կասի՝ մե խատ մտնեմ ներս, տիսնամ վո՞վ կա իսոր մեչ, բալքի կտորմ խաց տան ուտեմ: Կմտնի ներս, կտիսնա, տոներ բիթուն պաց են. էս դեհ կէրթա, էն դեհ կէրթա, որտեղ կմտնի մարթ չկա. ինչ աստըծու պարյութեն էլ ասես մեչն իլին ի. ուտելիք ասես, խմելիք ասես, խայնելիք ասես, ինչ ուզես կա մեչ. ըսկուն որ խարիր տարվան խերիք էր ինոնց: Էն էլ կասի. գեռ աղեկ ի, էլ դո՞ր կէրթամ: Կառնի ուր տղեյներ, կուկյա իտոր մեչ կնստի:

Քանիմ տարի կընցնի, իտոր ախպերներ օրմ կէլնեն ավ անելու, կուգան էն դեխրանքներն էլ պան փըստրոտելու, կտիսնան որ էն տեղ մեկ ըսկուն խորոտ քոշկ-սարեմ կա, որ էլ ասել չի կյա: Կասեն զայի ըստեղ մեկ անճանաչ թակավոր կնստի: Խաբար կօրոխկեն ներս՝ կասեն ֆլան թակավրու լաճերն իկեր են ըստա, կուզեն խե քե տեսնվել: Քեոր որ կլսի ուր ախպերներաց անուն կուրախնա, կասի թող կյան: Ինոնք որ կ'ազըրվեն ներս մտնելու, կտիսնան որ գեռ մեյ զարտրյուն ծիավորըմ էլ կուգա էն տեհեն, տաս-կսան մարթ էլ իտիվեն: Կասեն՝ տատրեք խենք վով ի: Որ կուգա կխասնի, կխառնուցեն, կտիսնան որ էն էլ թակավրու լաճ ի, էն էլ իկե ավ անելու. կասեն՝ գեռ մենք կուզենք երթալ էսա սուրի տիրոչ տես, տյու էլ կուգա՞ս: Կասի՝ խա: Էլմ խաբար կօրոխկեն ներս, կասեն՝ ֆլան թակավրու լաճն էլ կուզի կյալ քե տես: Էս էլ մյայար էտա կնգան իրիյն ի: Չում իսոնք հան-հյուն ներս կմտնեն, մերն ուր տղեյներաց կուսուցի կասի. «Որ առճին մարթ էօդի տոնիս ներս կմտնի, կանչեք. ճոչ քեռին էկա՞վ. - մեկ էլ օր կմտնի կանչեք. միժնեյ քեռին էկա՞վ, մեկել որ կմտնի կանչեք. պստիյ քեռին էկա՞վ. էն մեկելն որ կմտնի կանչեք. աղեն էկա՞վ: Էն թակավրու լաճերն էլ որ մե մեկ էս պաներ կլսեն էսա տղեյներաց պերնեն՝ հեքմաթ կմնան, կասեն՝ էս ի՞նչ պիտի էլնի: Կնստեն, էտա տան տեր կնիյն մադմ նուշ կպիրի կդնի առճըվքեր. խաբար խաբար, կխառնուցեն, կասեն էս ինչ պիտի էլներ, էսա տղեյներ մե ինչի՞ ըսնա կանչեցին:

Մերն էլ կասի. - Աղորթ ի. ես էտա իրիքիտ քեորն եմ, էնա մեկին էլ կնիյն եմ, որ տյուք լեզվանի կքտերանց ավատալով, ձի մլիտիք տյուս: Աստված իմ անմեղութեն տիսնալով էլմ իմ վերեն լյուսեց, ինոնց մոնութեն էլ մնաց ուրենց: Թե որ էլմ չեք ավատա, թե որ ես էն պաներաց խաբար եմ՝ էսա նշեր տառնան մոխիր. թե որ ես անմեղ եմ, էն պաներաց խաբար չեմ, խո գեռ հրմեն էլ կանչընան, էլնեն թաժա նուշ: Խեստ էսա ասելուն, մեկ էլ կտիսնան որ նշեր կելնեն նոր քյաղաձի պես: Իտոր ախպերներ, իրիկ իսոր վրեն հեքմաթ կմնան. էնկյախ կավատան որ անմեղ ի, ուրենց արած կտեռշմնեն, կէլնեն կտաթիթվեն մե-մեկելու վզնով, կուրախնան: Ախպերներ կերթան ուրենց կքտեր կկապեն ծյուքտերաց պոչ, կօրոխկեն սար, որ տանեն զանեն քարեքար, մեռուցեն: Էլմ կտառնան կուգան մոտ ուրենց քեոր, իրիյն էլ կուգա, կէլնեն մեյ տուն, մեյ տեղ, քեորն էլ նոր ուր ախպերներ կնշանի, կտսակի, կբախտավորվեն, մեյտեղ կնստեն:

Էրկնուց իրեք խատ խնձոր էճավ, մեյն ասողաց, մեյ լսողաց, մեյն էլ ականջ առողաց: